

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության 2012 թ I-ին եռամսյակի ընթացքում ծավալած գործունեության վերաբերյալ

2012 թվականի առաջին եռամսյակում քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժինների կողմից կատարվել են 1.303 քաղաքացիական կացության ակտային գրանցումներ: Տրվել են 306 կրկնօրինակ վկայականներ, 277 տեղեկանքներ՝ ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին: Բացի այդ գործակալության կենտրոնական մարմնի կողմից տրվել 28 տեղեկանք՝ ընտանեկան կարգավիճակի մասին: Նշված գործողությունների դիմաց գանձվել է 1.916.400 դրամ պետական տուրք:

Քաղաքացիական կացության ակտային գրանցումներից 619-ը վերաբերում է ծննդյան ակտային գրանցումներին, 339-ը՝ մահվան, 239-ը՝ ամուսնության, 36-ը՝ ամուսնալուծության, 25-ը՝ հայրության հաստատման, 8-ը՝ որդեգրման, 4-ը՝ անվան, հայրանվան, ազգանվան, փոխման, 24-ը՝ ուղղման և 9-ը՝ վերականգնման:

ՔԿԱԳ հանրապետական արխիվի կողմից առաջին եռամսյակում տրվել են 17 վկայականների կրկնօրինակներ, այդ թվում՝ 11-ը ծննդյան, 2-ը՝ մահվան, 4-ը՝ ամուսնության, ինչպես նաև 93 ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքներ, որոնց դիմաց գանձվել է 34.000 դրամ պետտուրք:

Նոտարական գործունեության կազմակերպում

ԼՂՀ նոտարական գրասենյակների կողմից 2012թ. առաջին եռամսյակում կատարվել են 3913 նոտարական գործողություններ, որոնց դիմաց գանձվել է 5.341.500 դրամ պետական տուրք:

2012թ.առաջին եռամսյակում ԼՂՀ նոտարական գրասենյակները կատարել են հետևյալ նոտարական գործողությունները. կտակների հաստատում՝ 39, պայմանագրերի վավերացում՝ 1486: Տրվել են սեփականության իրավունքի 5, ժառանգության իրավունքի 145 վկայագրեր, հաստատվել են 593 լիազորագրեր, 180 փաստաթղթերի պատճեններ և դրանց քաղվածքներ, վավերացվել է 614 փաստաթղթերի թարգմանության իսկությունը եւ կատարվել 851 այլ նոտարական գործողություններ:

2012թ. առաջին եռամսյակում ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կողմից հոգուտ պետության գանձվել է 7.291.900 դրամ պետական տուրք, այդ թվում՝ նոտարական գրասենյակների կողմից՝ 5.341.500 դրամ, ՔԿԱԳ տարածքային բաժինների և հանրապետական ՔԿԱԳ արխիվի կողմից՝ 1.904.400 դրամ, ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կենտրոնական մարմնի կողմից՝ 46.000 դրամ: